գյուղ, որ կոչվում է Միափոր[75]: Եղանակը աշնանային էր: Մտավ մի տուն և տեսավ մի կին, որ կրակ էր վառել ակութում և մոտիկ նստել, գուլպա էր գործում, իսկ մի փոքրիկ աղջնակ՝ մոտ հինգ տարեկան՝ նրա հետ: Մտնելով տուն՝ շահը ասում է՝ մանրուք առնո՞ւմ եք: Կինը հարցնում է՝ ուլունքներ ունե՞ս: Շահը պատասխանում է՝ այո՛, ունեմ մեծեր և մանրեր: Կինն ասում է՝ բեր, որ տեսնեմ: Շահը նրա առջև է դնում արկղը, որ կողովիկ է, և բանալով՝ ուլունքները առաջարկում է նրան: Կինը հարցնում է՝ ի՞նչ արժե սա: Սուտ վաճառողը ասում է՝ ինչ որ տաս, գինը այն է: Շահը ասում է՝ շատ քաղցած եմ, ինձ հաց բեր ուլունքների գնի դիմաց: Կինը ասում է՝ մի՞թե մարդու հաց են տալիս, գին առնում և լինում վարձքավաճա՞ռ: Այս ասաց և ելավ, երեք ձու բերեց և մի փոքր կճուճով դրեց կրակի վրա, խաշեց և դրեց նրա առջևը, բերեց նաև մածուն, կարագ և կորեկախառն հաց: Շահը այն կերավ և շատ հարցուփորձ արեց: Եվ հետո ասաց, իմ մայր, դու ամուսին ունե՞ս: Կինը ասաց՝ ունեմ, բայց հովիվ է և խաշներ է արածեցնում: Շահը հարցնում է՝ ոչխարները ձե՞րն են, թե՞ ուրիշների: Կինը պատասխանում է՝ և մերն են, նաև ուրիշների: Երեք ընկերներ են, միասին պահում են և երբեմն-երբեմն գալիս գնում են, քանի որ արոտը մոտ է: Շահը հարցնում է՝ քո ամուսնու անունը ի՞նչ է: Կինը պատասխանում է, թե Աբա է կոչվում: Ապա բացում է արկղը և ուլունքների բազմաթիվ շարեր կախում աղջկա պարանոցից, իսկ մորը տալիս է մի դեղին ապարանջան և ասում է. «Աստված շեն պահի քո տունը»:Կինը ասում է. «Ասա սրանց գինը, որպեսզի վճարեմ»: Մանրավաճառը ասում է, որ դու քո վարձքը չես վաճառում, ի՞նչ է, ես իմը պետք է վաճառե՞մ արդյոք: Այս ասելով ելավ գնաց իր տեղը: Եվ երկրում ահարկու հրաման արձակեց, թե ով որ պարսից ազգի ռամիկներից բռնությամբ որևէ բան առնի, գլուխը կկտրեմ. ինչ որ առնեն, գինը պետք է վճարեն, որովհետև կինը գանգատվել էր:

Երկու օր հետո շահը մի զինվոր ուղարկեց Միափոր գյուղը և ասաց՝ գնա Աբա հովվի տունը և նրան ու կնոջը ասա, թե շահը ձեզ կանչում է: Իսկ եթե հարցնեն, թե շահը մեզ որտեղի՞ց է ճանաչում, ասա, որ ձեր համբավը լսել է, դրա համար ձեզ խնդրում է: Զինվորը գնաց, գտավ տունը և ահա այդ նույն ժամին տանն էր նաև Աբան: Զինվորը շահի պատգամը հաղորդեց, և ասելուց ու լսելուց

հետո պատրաստվեցին գնալու: Աբան գնաց իր հոտից բերեց խոշորաեղջյուր մի խոյ, իսկ կինը հագավ իր ունեցած հագուստները, տունը հանձնեցին իրենց հարևաններին, ամուսինը շալակեց աղջնակին և այդպես հովվական զգեստով խոյը առաջներն արած գնացին: Հաջորդ օրվա առավոտյան հասան շահի մոտ: Ըստ զինվորի պատվերի՝ ընկան երեսների վրա, երկրպագեցին շահին և ապա մտան վրանը: Շահը ասաց՝ բարով ես եկել, մա՛յր: Կինը ասաց՝ բարին արևդ և հոգուդ: Շահը հարցնում է. «Ինձ ճանաչո՞ւմ ես»: Կինը ասում է՝ այո՛, դու այն մարդն ես, որ իմ դստերը շնորհեցիր այս ուլունքները: Ապա ծիծաղելով շահը ծափ զարկեց և ասաց՝ այ հա, այն ժամանակ ուլունքավաճառ էի, իսկ այժմ ինչպե՞ս շահ դարձա: Հրամայեց նստել, շատ բան խոսեց նրանց հետ և նրանցից լսեց իմաստուն, հաճելի և ընդունելի խոսքեր: Երբեմն ամուսնու հետ էր խոսում, երբեմն կնոջ հետ և առանձին-առանձին լսում էր պատշաճ ու շատ խելացի պատասխան: Երկու օր հետո, ոտից գլուխ հանդերձավորելով ամուսնուն ու կնոջը և աղջնակին՝ նոտարին հրամայեց գրել մելիքության հրովարտակ, որ *բաղամն* է, և իրավունք տվեց նրանց որդուց որդի լինել այն գավառի մելիք: Եվ միևնույն զինվորին հրամայեց՝ մելիք Աբային տանել, շրջեցնել գավառում և հայտարարել շահի հրամանը: Եվ մինչև այսօր մելիք է Կայենաձոր նույն գավառում, որ Ղրաղի ձորն է:

Եվ 1086 (1637) թվին իմ եղբայր Խաչատուրը ինձ առավ, գնացինք Միափոր գյուղը և Մելիք Աբայի տանը խանութ վարձեցինք և ոսկերչություն էինք անում. այս ամենը նրանից լսեցինք: Սրա անունը Մելիք Աբա էր ըստ իր պապի՝ առաջին Մելիք Աբայի անվան: Ուրեմն մի պատառ հացը այսքան մեծության հասցրեց:

ԳԼՈՒԽ ԺԶ
ՂԱՐՂԱ ԽԱՉՆԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Չպետք է զանց առնենք անցյալ եղելությունները, այլ պետք է պատմենք ըստ մեր կարողության և ըստ պատմված լուրի: Քանզի, ինչպես պատմում է Առաքել վարդապետը, վրացի Մովրովը (գավառապետ) գնաց բերեց Շահ Աբասին և տարավ Վրաստան: Նա